



8. (1.5) Հաշվել. ա)  $9\delta - 10\gamma - 3\delta + 45\gamma =$

բ)  $4u^2 - 8 \eta u^2 =$   $\eta u^2$

գ)  $5u - 3g + 42kq + 4u - 5g + 35kq =$

9. (2.0) Հաշվել արտահայտության արժեքը՝  $2\frac{1}{3} \cdot \left(15\frac{7}{10} - 3\frac{2}{15}\right) + 16\frac{5}{6} : \left(8\frac{3}{5} - 7\frac{11}{20}\right)$

10. (2.0) 60 և 72 թվերը պարզ արտադրիչների վերլուծելով՝ գտնել նրանց ամենամեծ ընդհանուր բաժանարարը և ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:

11. (2.0) Միևնույն բնակավայրից հակառակ ուղղություններով միաժամանակ դուրս եկան երկու հեծանվորդ: 4 ժամ անց նրանց միջև հեռավորությունը 280 կմ էր: Մի հեծանվորդի արագությունը 30 կմ/ժ էր: Գտնել մյուսի արագությունը:

12. (2.5) Երեք խանութում 180 կգ միրգ կա: Երրորդ խանութում 3 անգամ քիչ միրգ կա, քան երկրորդում, և 2 անգամ շատ, քան առաջինում: Երրորդ խանութում քանի՞ կգ միրգ կա:
13. (2.0) Մի ծորակն ավազանը լցնում է 9 ժամում, իսկ մյուսը՝ 6 ժամում: Ավազանի ո՞ր մասը կլցվի, եթե առաջին ծորակը բացեն 2 ժամ, իսկ երկրորդը՝ 3 ժամ:
14. (2.0) Առաջին օրը Դավիթը կարդաց 30 էջ, իսկ երկրորդ օրը՝ առաջին օրվա կարդացածի  $\frac{5}{6}$  մասը: Քանի՞ էջ ունի գիրքը, եթե Դավիթն երկու օրում կարդացել է նրա  $\frac{5}{12}$  մասը: